ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1443-Ա « 18 » մարտի 2026թ.

ՎԴ/3978/05/22 ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 44Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Արման Պապեյանի լ/ա Հռիփսիմե Գալստյանի դիմումը, ինչպես նաև 2023 թվականի մայիսի 3-ի ՀՀ վարչական դատարանի ՎԴ/3978/05/22 վճիռը (օրինական ուժի մեջ է մտել 05.09.2024թ.)՝ Մալաթիա-Սեբաստիա 2-րդ փողոց, նրբանցք, թիվ 44բ հասցեում գտնվող տնամերձ հողամասի (ծածկագիր՝ 01-007-0063-0058) սահմանները ճշտելու մասին:

Հաշվի առնելով Արման Պապեյանի կողմից 27.02.2026թ. ներկայացված համաձայնությունը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.02.2026թ. տրամադրած հ.Ն/8385-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Մալաթիա-Սեբաստիա 2-րդ փողոց, նրբանցք, թիվ 44բ հասցեում գտնվող 226.85քմ (տնամերձ) մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ